

ԱՍՏԻՃԱՆԱՎՈՐՈՒՄԸ ՍՈՒՐԱՅԱՆԻ «ԳԵՒՐԳ ՄԱՐԶՊԵՏՈՒՆԻ» ՊԱՏՄԱՎԵՊԻ ԽՈՍՔԱՐՎԵՍՏՈՒՄ՝

«Գեւորգ Մարգպետունի» պատմավեպի գրականագիտական ուսումնասիրությունների² տարբեր հատվածներում մի քանի նախադասությունամբ կամ մի քանի էջով հպանցիկ անդրադարձումներ կան նաեւ հեղինակի խոսքարվեստի որոշ առանձնահատկություններին: Թեեւ Արսեն Տերտերյանի աշխատության մեջ նույնիսկ առանձին ենթաբաժին է նվիրված վեպի ոճական քննությանը (էջ 267–271), բայց այն հիմնականում կազմված է գեղեցիկ արտահայտությունների, դարձվածքների եւ թեւավոր խոսքերի մեջբերումներից, որովհետեւ անցյալ դարի 30–40-ական թվականներին հայ բանասիրության մեջ ոճագիտությունը՝ որպես ինքնուրույն գիտաճյուղ դեռեւս չէր տարանջատված: «Գեւորգ Մարգպետունի» վեպի լեզվաոճական յուրահատկությունների որոշակի, բայց ոչ ամբողջական վերլուծություն է պարունակում միայն Լ. Եզեկյանի «Գրական աշխարհաբարը եւ արեւելահայ պատմավեպի լեզուն» աշխատության չորրորդ գլուխը³, որում ոչ մի խոսք չկա աստիճանավորման (եւ ոչ միայն աստիճանավորման) մասին: Այսինքն՝ այս վեպի լեզվի շատ առանձնահատկություններ տակավին ուսումնասիրված չեն: Այս հոդվածի նպատակադրումները եւս սահմանափակ են՝ ցույց տալ, թե վեպում գործածված աստիճանավորումները որքանով են նպաստել գլխավոր հերոսների հոգեբանական բացահայտումներին եւ կերպարների տիպականացմանը:

^{1*} Ստացվել է՝ 27.10.2024, գրախոսվել է՝ 27.11.2024:

Էլ. հասցե՝ terminasyanashot@gmail.com:

² Ա. ՏԵՐՏԵՐՅԱՆ, *Մուրացան, Եր., 1971: Մ. ՄԿՐՅԱՆ, Էջեր հայ վիպասանության պատմությունից, Եր., 1957: Ս. ՍԱՐԻՆՅԱՆ, Մուրացան, Եր., 2004: Զ. ԱՎԵՏԻՍՅԱՆ, Հայ պատմավեպի պոետիկան, Եր., 1986: Վ. ՍԱՖԱՐՅԱՆ, Գրողի եւ կերպարի անհատականությունը, Եր., 2001* ևւն:

³ ՏԷՄ ԼԵՒՈՆ ԵԶԵԿՅԱՆ, *Գրական աշխարհաբարը եւ արեւելահայ պատմավեպի լեզուն, Եր., 1990, էջ 402–437:*

Մինչև բուն խնդրին անցնելը հակիրճ անդրադառնանք «Գեւորգ Մարգպետունի» վեպի մտահղացմանը եւ հեղինակի աշխարհայացքին:

Նշենք, որ մենք եւս հետեւել ենք որոշ գիտնականների կիրառած եղանակներից մեկին. այն է՝ Մուրացանի գործերը մեկնաբանելիս երբեմն օգտվել նաեւ նրա կենսագրական թեկուզ մեկ-երկու մանրամասներից, որոնց լույսի տակ առավել տեսանելի է հեղինակի աշխարհայացքը: Նման սկզբունքը որոշակի հնարավորություն է տվել վեպը ուսումնասիրողներին՝ նաեւ իրարից տարանջատելու գաղափարախոս եւ գեղագետ Մուրացաններին, որոնց նպատակադրումները երբեմն հակասում են միմյանց:

Ավելացնենք նաեւ, որ հնարավորինս խուսափելով նախորդ ուսումնասիրողների կարծիքները վերաշարադրելու ավանդույթից՝ մենք պարզապես փորձել ենք որոշ լրացումներով առավել տեսանելի հիմնավորել ընդունված այն տեսակետը, որ Մուրացանը ազգի փրկության եւ պահպանման գործում առանձնակի կարեւորում է Հայ Առաքելական Եկեղեցու եւ բարոյապես ամուր ընտանիքի դերը⁴: Բավական է հիշել, որ Մինաս Բերբերյանին ուղարկած ինքնակենսագրության մեջ վիպասանը խոստովանում է, թե Հայ Առաքելական Եկեղեցու բացառիկ նշանակությունն ընդգծելու համար նույնիսկ երկու վեպ է գրել՝ «Իմ կաթոլիկ հարսնացուն» եւ «Հայ բողոքականի ընտանիքը»⁵: Հարց է առաջանում՝ ինչո՞ւ է Մուրացանը «Գեւորգ Մարգպետունի» վեպում այնքան անբարեհաճ Հովհաննես Դրասխանակերտցի Հայոց կաթողիկոսի եւ հրաշալի պատմիչի պատմական կերպարի հանդեպ, որի մասին վեպի հերոսները խոսում են քամահորանքով, որի գործողությունները քննադատում են բոլորը... Ենթադրելի է, որ վեպը գրելիս գաղափարախոս Մուրացանին առաջին հերթին անհրաժեշտ են եղել անձնականը հայրենիքին զոհաբերելուն անպատրաստ հերոսներ, որոնց պատճառով երկիրը մեծ աղետների է ենթարկվել: Իսկ այդ ծանր վիճակից հայրենիքը փրկելու համար անձնազոհ հերոսներ ստեղծելը համեմատաբար ավելի դյուրին է: Եւ որքան բարձր դիրք ունենան անձնապաշտ հերոսները, այնքան հեշտ կլինի հիմնավորել, որ հենց նրանց պատճառով է երկիրը հայտնվել աղետալի վիճակում: Եւ ահա,

⁴ Այս տեսակետը առաջին անգամ հիմնավորել է Ա. Տերտերյանը իր նշված գրքի «Մուրացանի աշխարհայացքը» գլխում. էջ 11–27:

⁵ Տե՛ս Մ ՈՒՐԱՑԱՆ, Երկերի ժողովածու յոթ հատորով, հտ. 7, Եր., 1965, էջ 137–138: Այս յոթհատորյակի գրքերից հետագա քաղվածքները կնշվեն (Մ., հտ..., էջ... ձևով):

Հովհաննես Դրասխանակերտցուն «Հայոց պատմություն» գրքի էջերում հայտնաբերում է մի քանի դրվագներ, որոնցում կաթողիկոս-պատմիչն անկեղծորեն խոստովանում է, որ արաբների հետապնդումներից ու գերեվարվելուց խուսափելու համար հաճախ է ստիպված փախուստի դիմել... Ահա եւ գաղափարախոս Մուրացանի առաջին «զոհ»... Վիպասանը միտումնավոր գրեթե անտեսում է Հովվապետի համեստ, ոչ անձնամեծար նշումները՝ իրար դեմ առճակատող հայ իշխաններին հաշտեցնելու իր ջանքերի եւ հայրենանվեր այլ գործերի մասին⁶: Սակայն նկատենք, որ Մուրացանը, քննադատելով կաթողիկոսին, նպատակ ունի ոչ թե նսեմացնելու, այլ հակառակը՝ առավել ընդգծելու մեր ժողովրդի ինքնության եւ գոյապայքարի գործում Հայ Առաքելական Եկեղեցու եւ նրա առաջնորդի բացառիկ կարեւորությունը: Պատահական չէ, որ Մարգարտունին ընդամենը քսան կամավորների հետ Բեշիրի բանակի դեմ մարտի գնալուց առաջ, քանի որ այդ պահին կաթողիկոսը բացակայում էր Գառնիից, պահանջում է, որ այդ քաջերը իրենց սրերը դնեն Մաշտոց կաթողիկոսի շիրմաքարին ու երգվեն լինել «անձնվեր զինվոր եւ նահատակ՝ հայրենիքի փրկության»: «Ձեր սրերը թող օրհնե սուրբ Մաշտոցը, — ասում է իշխանը, — եւ ձեր ուխտին ու երդման թող վկա լինին նրա նշխարները» (Մ., հտ. 4, էջ 294): Գաղափարախոս Մուրացանին, հոգեւոր առաջնորդից բացի, պետք է եղել անձնականը հայրենիքի շահերից վեր դասելու պատճառով երկիրը պառակտած ու թշնամու արշավանքների եւ ավերածությունների պատճառ դարձրած եւս մեկ գլխավոր անձ: Եւ վեպում այդ անձը հայոց պատմության ամենանշանավոր ու փառապանծ արքաներից մեկն է՝ Աշոտ Երկաթը... Բայց ինչպե՞ս համոզիչ դարձնել մի «փաստ», որը գոնե քիչ հակասի պատմական ճշմարտությանը: Պատմիչը նշում է, որ երկիրը պառակտել էին իրար դեմ կռվող, իրարից ամրոց ու կալվածքներ խլող իշխանները, որոնց մեջ կային նաեւ արքայի դեմ ապստամբածներ: Իսկ ի՞նչ պատճառով կարող էին իշխանները, նույնիսկ իր աները դուրս գալ արքայի դեմ: Գաղափարախոս Մուրացանն առաջարկում է նաեւ այս հարցի «լուծումը»: Քանի որ ազգապահպանման հիմքը Հայ Առաքելական Եկեղեցին ու բարոյապես ամուր ընտանիքն են, ուրեմն հարմար կլինի Աշոտ Երկաթի ձախողումներն էլ պայմանավորել նրա բարոյապես ան-

⁶ Տե՛ս ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԴՐԱՍԽԱՆԱԿԵՐՏՑԻ, Հայոց պատմություն, Եր., 1996, էջ 296, 301, 308, 312 եւն:

հաստատ ընտանեկան կյանքով: Մանավանդ որ պատմիչը գրում է, որ Աշոտ Երկաթի անհաջողությունները պայմանավորված էին «...այն ողջախոհությունը, որ նա սկզբից էր ստացել, անմաքուր բղջախոհությամբ⁷ փոխակերպելով...»⁸: Բղջախոհություն... Բայց չէ՞ որ պատմիչը նշում է, որ արքայի դեմ ապստամբել է նաեւ Ուտիքի վերակացու Յլիկ Ամրամը: Կարծես թե կապը հայտնի է: Ուրեմն թող Հայոց արքան սիրային կապի մեջ լինի հենց Ուտիքի վերակացու Յլիկ Ամրամի կնոջ հետ եւ իր անբարո վարքագծի պատճառով դժբախտություններ բերի երկրին ու ժողովրդին:

Եւ ի՞նչ. գաղափարախոս Մուրացանին հաջողվում է հասնել իր նպատակին: Այս հարցին պատասխանելու համար հարկ է ծանոթանալ մյուս՝ ոչ թե գաղափարախոս, այլ մարդկային հոգեկերտվածքների նրբին գեղածեւման վարպետ Մուրացանին, որին անշափ սիրելի են իր ժողովրդի պատմության նշանավոր հերոսների կերպարները, նույնիսկ ազգի խորհրդանիշ դարձած վայրերը: Հիշենք՝ ինչպիսի հուզումնալից ապրումներ է ունեցել առաջին անգամ Սեւանա լիճը տեսնելիս, եւ հետո՝ նավակով դեպի կղզի գնալիս, հենց նավակի միջից ինչպես է կատարել դպրոցական տարիների իր ուխտը՝ հայոց սրբազան ավագանից մեկ բաժակ ջուր խմելը: «Եւ առաջանում էի սրտատրոփ. մի ինչ-որ քաղցր եւ գողտր զգացմունք մղում էր իմ սիրտը դեպի այս ծովակը...ինձ թվում էր, թե Գեղամա ծովակի մեջ ինձ անծանոթ, բայց հոգվույս ընտանի շատ նորություններ կան, որոնց պիտի տեսնեի, թե անցյալ դարերի շատ անցքերի պատմություններ նրա ալիքների մեջ պիտի կարդայի...» (Մ., հտ. 7, էջ 64): «Ինքս էլ լցրի բաժակս այդ վճիտ ու քաղցրահամ ջրով եւ ախորժանոք խմեցի: Սա էլ իմ ուխտերից մին էր, որ կատարեցի: Բայց ի՞նչ ուխտ. աշակերտական ժամանակի, անկեղծ զգացմունքների եւ սուրբ ոգեւորության ուխտ...»⁹: Այսպիսի ներաշխարհի տեղ գեղագետը պետք է որ դեմ լիներ իր մյուս կեսի՝ գաղափարախոսի արարքներին: Կարծում ենք՝ թեեւ գաղափարախոս Մուրացանի նպատակադրումն ազնիվ է, բայց ի տարբերություն գեղագետի՝ իրագործումը այնքան էլ համոզիչ չէ: Դժվար չէ նկատել, որ գաղափարախոս Մուրացանը համեմատաբար անկաշկանդ է հատկապես վեպի առաջին հատվածներում, երբ գործողության մեջ չկա

⁷ Բղջախոհ – վավաշոտ, ցանկասեր, տոփասեր, ժամանակակից հայոց լեզվի բառարան, հտ. 1, եր., 1969, էջ 325:

⁸ Հովհ. ԴՐԱՍԽԱՆԱԿԵՐՏՅԻ, նշ. գիրքը, էջ 225 :

⁹ ՄՈՒՐԱՑԱՆ, հտ. 7, էջ 68:

Հայոց արքան, եւ նրա արարքների մասին պատմում են ուրիշները: Այսպես՝ հենց առաջին գլխում Սահականուշի եւ իր դայակի զրույցի ընթացքում աստիճանաբար սկսում են զծագրվել անպատասխան սիրուց տառապող հավատարիմ կնոջ եւ նրա հանդեպ այնքան անիրավ ամուսնու կերպարները: Ճիշտ է՝ թագուհին հիացմունքով է խոսում նաեւ իր սիրեցյալի բազում քաջագործությունների, նրա առնական գեղեցկության եւ վեհանձն կեցվածքի մասին, սակայն նրա հոգեկան տվյալաանքների համապատկերում Աշոտ Երկաթի կերպարն ընթերցողի համար, մեղմ ասած, այնքան էլ գրավիչ չէ:

Գաղափարախոս Մուրացանը ջանք չի խնայում նաեւ Սահակ Սեւադայի եւ Յլիկ Ամրամի հանդեպ արքայի գործած անիրավությունները թվարկելիս: Առաքինի մարդկանց համար բարոյապես ամուր ընտանիք չունեցող դյուցազունն անգամ մի նենգ ու երախտամոռ չարագործ է, որին պատժելու համար ապստամբել են նույնիսկ բարեկամներն ու երբեմնի հավատարիմ զինակիցները: Սակայն, երբ ոչ թե պատմվում է Աշոտի մասին, այլ արքան ինքն է հայտնվում վիպական գործողությունների կենտրոնում, ականատես ենք լինում մեկ այլ կերպարի: Գաղափարախոս Մուրացանը, ասես զգալով Աշոտ Երկաթի պատմական կերպարի հանդեպ իր մեղանշումները, տեղը զիջում է մյուս՝ պատանեկան ուխտը կատարելու համար Սեւանա լճից ջուր խմող Մուրացանին, որը փորձում է փրկել Հայոց պատմության ամենասիրված հերոսներից մեկի կերպարը: Ընթերցողին է ներկայանում մի հերոս, մի առյուծասիրտ զորավար, որը բազում քաջագործությունների համար արժանիորեն վաստակել է Երկաթ մականունը, բայց չի կարողացել պատենշ դառնալ արքայի եւ մարդու միջեւ: Մարդ, որը չի կարողացել իր մեջ խեղդել մահկանացուին բնորոշ ամենաբնական ու ամենանվիրական զգացմունքներից մեկը՝ սերը: Այս երկու Մուրացանների «բախումից» ծնունդ է առել հոգեբանական խորը մի կերպար, որպիսին քիչ է հանդիպում նույնիսկ համաշխարհային ճանաչում ունեցող երկերում: Ավելացնենք, որ վեպի որոշ դրվագներում գեղագետ Մուրացանը փորձում է փոքր-ինչ մեղմել նաեւ գաղափարախոս Մուրացանի՝ Հայոց կաթողիկոսի կերպարը միակողմանի մատուցելու մղումը: Նշում է, որ Հովվապետը մեծ ցավ էր ապրում երկրին ու ժողովրդին պատուհասած աղետներից, բայց ավելի հաճախ գրեթե կրկնում էր այն միտքը, թե՝ «Նրա բարեկազմ, հաղթանդամ եւ արտաքուստ զորավոր մարմնի մեջ ապրում էր մի տկար սիրտ եւ երկշոտ հոգի» (Մ., հտ. 4, էջ 202): Եւ

նման փոքրիկ դրվագները չեն բարձրանում գրական հերոսի հոգեկան ներքին ողբերգության խորքային պատկերման մակարդակի, որից էապես կշահեր վեպի գեղարվեստականությունը:

Ոճագիտությանը նվիրված ձեռնարկներում սովորաբար խոսքի արտահայտչականությունը պայմանավորող միջոցները տարանջատում են պատկերավորման (մակդիր, համեմատություն, փոխաբերություն, անձնավորում են) եւ արտահայտչական (կրկնություն, աստիճանավորում, հակադրություն են) տեսակների: Բայց մեզ առավել ընդունելի է այն մոտեցումը, որ «...այդ տեսակները դիտարկվում են միասնաբար՝ որպես պատկերավորման կամ արտահայտչական կամ պարզապես՝ պատկերավորման-արտահայտչական միջոցներ: Բոլոր դեպքերում, տարաբնույթ անվանումներից ու դասակարգումներից լեզվական այդ միջոցների բնույթն ու բովանդակությունը եւ դրանց նկարագրությունը չեն փոխվում»¹⁰: Աստիճանավորմանն առավել մանրամասն կարելի է ծանոթանալ ռուս լեզվաբանների տասնյակ ուսումնասիրություններում, որոնցում փորձ է արվում բացահայտել այս արտահայտչամիջոցի իմաստային, դարձվածքային, քերականական եւ այլ առանձնահատկությունները¹¹: Սակայն մենք չենք անդրադառնա այդ տեսական դրույթներին, քանի որ, ինչպես նշել ենք, սույն հոդվածի բուն խնդիրն է ցույց տալ, թե «Գեւորգ Մարգալետունի» վեպում օգտագործված աստիճանավորումները որքանով են նպաստել պատկերային համակարգի հարստացմանը եւ հերոսների կերպարների տիպականացմանը: Կարծում ենք, որ հերոսների հոգեկերտման ու տիպականացման, ինչպես նաեւ աստիճանավորման նրբին կիրառումների առումով առավել տպավորիչը այն դրվագներն են, որոնք ներառված են Աշոտ Նրկաթի, Սահականույշի, Սահակ Սեւադայի, Յլիկ Ամրամի, որոշ դրվագներում նաեւ Գեւորգ Մարգալետունու վերհուշերի, երկխոսությունների եւ խոհերի պատկերներում: Ճիշտ է՝ վերջինիս գործողություններն ու մտածելակերպը համեմատաբար հեշտրենկալի էն, որովհետեւ ունենալով բարոյապես ամուր ընտանիք՝ նա զերծ է անձնական ծանր ապրումներից ու տառապանքներից եւ ամբողջովին նվիրված է հայրենիքի փրկության գործին, բայց վեպում մի քանի գեղեցիկ

¹⁰ ՅՈՒ. ԱՎԵՏԻՍՅԱՆ եւ ուրիշներ, Հայոց լեզու եւ խոսքի մշակույթ, դասագիրք հումանիտար եւ բնագիտական ֆակուլտետների ուսանողների համար, Եր., 2019, էջ 132:

¹¹ Տե՛ս <https://cyberleninka.ru/article/n/gradatsiya-kak-stilisticheskij-priem-hudozhestvennoy-rechi>:

հատվածներ կան, որոնցում Մուրացանը բացահայտել է նաեւ գլխավոր հերոսի հոգու զգայուն ծալքերը: Դրանցից ամենահաջողվածը նշանավոր մարտին նախորդող գիշերը խաղաղ քնած որդուն տեսնելու հուզառատ ապրումների նկարագիրն է.

«Գուցե իմ նախածեռնությունը հաճելի չէ Աստծուն, գուցե նա բարկանում է, որ ես հանդուգն մտքեր եմ հղանում եւ խաղաղ քուն վայելող արարածների վրա անակնկալ հարձակումն եմ գործում... Գուցե նա ինձ պատժելու համար հագարացիներից մեկի սուրը մխե իմ այս միամոր որդու կողը եւ նրա կենաց արեւը խավարեցնե... Եւ ես հավիտյան զրկվեմ նրանից... իմ կյանքի այս միակ մխիթարությունից... Օ՛հ, եւ տեսնեմ նրան արյունաշաղախ, ժպիտը գեղեցիկ դեմքի վրա սառած եւ սիրուն աչքերը հավիտյան փակված... Ո՛չ, անկարելի է. ո՞ր Աստվածը այնուհետեւ կարող է իմ կսկիծը փարատել... Եւ ի՞նչ լուր տանեմ ես նրա մորը. ի՞նչ երեսով նրան երեւամ... Արդյոք մի անգուլթ, մի բարբարոս չեմ ես...» (Մ., հտ. 4, էջ 328–329):

Մուրացանն ընդհանրապես նախընտրում է հերոսների խոսքը շարադրել հռետորական հարցեր, բացականչություններ եւ հուզական-զգացմունքային բառեր պարունակող նախադասությունների աստիճանավորումով, որոնց կազմում սովորաբար կան նաեւ լեզվի ու պատկերավորման ամենատարբեր արտահայտչամիջոցներ՝ մակդիր, համեմատություն, փոխաբերություն եւն: Սակայն այս պատկեր-խոհում աստիճանավորումից ու հռետորական հարցերից բացի այլ արտահայտչամիջոցներ չկան: Օգտագործած բառերն էլ առանձին վերցված ոճական հարուստ լիցքեր չպարունակող, համագործածական միավորներ են: Այսպիսի սահմանափակ «զինանոցով» այսքան տպավորիչ գեղարվեստական խոսք ձեւավորելը Մուրացանի մեծ տաղանդի խոստուն վկայություններից է:

Սակայն, ինչպես կտեսնենք, աստիճանավորման գործածության ոճական բազմազանությունամբ առավել ուշագրավը վեպի մյուս՝ անձնական ողբերգություններից տառապող հերոսների կերպավորման հատվածներն են, որոնք հիմնականում երբեմնի երջանիկ օրերի, ապա հիասթափության ու խորտակված անուրջների նկարագրություններ են կամ իրենց ապրած ողբերգությունների համար ինքնադատապարտման ու ինքնաձազկման արտահայտություններ: Սկսենք թագուհու՝ երջանիկ օրերի հուշապատումների առավել պատկերավոր եւ գեղարվեստական լիցքերով հարուստ աստիճանավորումներից:

«Երբ առաջին անգամ հայրս հայտնեց, թե Հայոց իշխանները վրաց թագավորի եւ աբխազաց Գուրգենի հետ միասին պիտի ժողովեն Աշոտ արքայորդուն թագավոր պսակելու... ինչպե՞ս ցանկանում էի, որ բոլոր իշխանազն կանանց մեջ ամենից բարձր հանդիսանայի ես, որ ամենքի աչքերն ինձ վրա նայեին, որ ամենքը ինձմով զբաղվեին, եւ որ այդ ամենը Աշոտ երկաթը տեսներ...» (Մ., հտ. 4, էջ 58–59): «Ձեմ կարող նկարագրել, թե ինչպիսի՜ անձկությամբ էի փափագում տեսնել երիտասարդ թագավորին, որ այնքան կարճ ժամանակում ընկճեց, խորտակեց թշնամու զորությունը, մաքրեց երկիրը բռնավորներից, ազատեց ժողովուրդը ստրկությունից, գրավեց ու գերեց իշխանների սիրտը եւ նրանց բոլորին ոգեւորեց այնքան, որ միմյանց դեմ ունեցած ամեն գծաություն մոռանալով՝ եկան-ժողովվեցան յուր շուրջը, արքայական թագով յուր արժանավոր գլուխը պսակելու» (նույն տեղում, էջ 60):

Նկատենք, որ թագուհու եւ դայակի զրույցում հանդիպող այս եւ ուրիշ դրվագներում թեեւ երբեմն հանդիպում են միայն բառային հոմանիշներով կամ բառակապակցություններով կազմված աստիճանավորումներ, օր.՝ «...ամբողջ Դվինը մի աչք, մի շունչ եւ մի հոգի դարձած՝ յուր թագավորի ելնելուն էր սպասում...: Որոտում էին հրապարակները, բուրգերը, աշտարակները եւ մինչեւ անգամ քաղաքից դուրս գտնվող մարտկոցները» (նույն տեղում, էջ 65), սակայն ավելի հաճախ այդ հիշողություններն ու մտորումները կերտված են այնպիսի ստորադասական խնդիր- նախադասությունների հաջորդականությամբ, որոնց նախորդում է նպատակ, իղձ, երազանք արտահայտող որեւէ բայածեւ՝ ցանկանում էի, փափագում էի, երազում էի եւն: Ոչ հաճախ նրա հոգեկան ապրումների եւ բռնկուն հույզերի աստիճանավորումներն ամփոփված են նաեւ հեղինակային խոսքին բնորոշ պատմողական նախադասություններում, որոնք աչքի են ընկնում գեղարվեստական խոսքին բնորոշ ամենատարբեր արտահայտչամիջոցների հագեցվածությամբ: Ասվածը հիմնավորենք եւս երկու մեջբերումներով: «...Այո՛, դուք ընդունում էիք թագավորին: Գարգմանը երիտասարդացել էր. լեռներն ու բլուրները հրճվում էին, ժողովուրդը շլանում էր Հայոց իշխանապետության փառահեղ պերճություն... իսկ Էս, Սեդա՛, ես ընդունում էի ոչ միայն Հայոց թագավորին, Հայոց իշխանապետության պարծանք Աշոտին, այլեւ... նրան, որ բերում էր յուր հետ իմ վարդաժին հույսերի պսակը, իմ անսահման երջանկությունը, իմ երանության երկինքը... Ընդունում էի նրան, որ կրում էր յուր մեջ իմ սիրապատար սիր-

տը, իմ սիրատենչ հոգին... որի հայացքը հափշտակում էր իմ էությունը, որի ձայնը հնչում էր իմ ականջին ինչպես քերովբեների մեղեդին... Եւ այդ դյուցազնը, այդ գերբնական արարածը, Սեդա՛, իմ փեսան, իմ ամուսինն էր...» (նույն տեղում, էջ 80–81):

«Եթե համոզված չլինեի, որ այս շլացուցիչ փառքին հաղորդ պիտի լինեմ ես, եթե չիմանայի, որ ինձ է պատկանում այն անձը, որին ամենքն աշխատում են մոտենալ, որի հայացքը այնպես ճգնում են հափշտակել, եւ ես միեւնույն ժամանակ տեսների ինձ այնքան նրանից հեռու, աշտարակի մեջ բանտարկյալ, օ՛, գուցե այդ բարձրությունից իսկ գլորեի ինձ ներքեւ... բայց երբ մտածում էի, թե նա իմն է, թե այդ բազմամբոխ զորքի ու ժողովրդայն հրամայողը իմ ապագա ամուսինն է, երբ տեսնում էի, որ երբեմն իմ ձեռքը խնդրող իշխաններն այժմ անհուն մեծարանքով ու ակնածությունմբ գլուխ են խոնարհում նրա առաջ, եւ այդ բոլորը ես տեսնում եմ, ներքին հրճվանքից սիրտս կամենում էր դուրս թռչիլ... Եւ այդ միեւնույն սիրտը, եթե գտնվեր այդ բոպեին իմ ձեռքում, հավատացիր, իմ բարի՛ Սեդա, ես կգլորեի նրան այդ դյուցազնի ոտքերի առաջ...» (նույն տեղում, էջ 83):

Այս հուշապատկերներում շքեղորեն միահյուսված են անձնավորումն ու փոխաբերությունը (Սիրտս կամենում էր դուրս թռչել, Գարգմանը երիտասարդացել էր, լեռներն ու բլուրները հրճվում էին, ...սիրտս... կգլորեի այդ դյուցազնի ոտքերի առաջ), նրբակերտ մակդիրները (փառահեղ պերճություն, իշխանապետության պարծանք, վարդաժին հույսեր, երանության երկինք), չափազանցությունը (գերբնական արարած), համեմատությունը (որի ձայնը հնչում էր ...ինչպես քերովբեների մեղեդին), բայց կարծում ենք՝ ակնբախ է, որ այս գեղապատկերների գլխավոր առանցքը աստիճանավորումն է:

Իսկ երբ Թագուհին պատմում է իր ապրած ողբերգությունների մասին, նրա թախծոտ մտորումները նկարագրող դրվագներում արդեն Մուրացանը շարահյուսական այլ կառույցներ է կիրառում: Այսպես՝ պատահմամբ ամուսնու դավաճանությանը ականատես լինելու մասին հիշողությունը, որում վիրավոր հոգու ցավատանջ ապրումներն են, արտահայտված է հեռտորական հարցերով աստիճանավորված կարճ, բայց տարողունակ բացականչական նախադասություններով: Հայտնի է, որ հուզական խոսքում կարող են լինել նաեւ խոսակցական ոճին հատուկ շարահյուսական շեղումներ, որոնք հատկանշվում են «...պարզ, համա-

ռոտ նախադասությունների, ինչպես նաև թերի նախադասությունների առատ գործածությամբ, ոչ թե շաղկապով, այլ շարահյուսությամբ կապակցություններով, անհետեւողականության զանազան դրսեւորումներով: Վերջինս արտահայտվում է նրանով, որ նախադասության տարբեր մասերի միջև ենթադրվող կապը խզվում է, նախադասության հաջորդ մասը բացակայում է եւ միայն մտովի է ենթադրվում¹²: Մեջբերենք թագուհու հոգեկան տվյալտանքներն արտահայտող այդպիսի դրվագներից մեկը: «...եւ ի՛նչ տեսա, Սեդա... Օ՛ր, ինչպե՛ս այդ ժամանակ շնչասպառ չեղա ես, ինչպե՛ս չմեռա... Ասպրամ իշխանուհին, Սեդա՛... թագավորի գրկում... Այո՛. իմ Աշոտը, իմ անսահման սիրո եւ երջանկության թագավորը գրկախառն Յլիկ Ամրամի կնոջ հետ... Ա՛խ, Սեդա՛, զգո՛ւմ ես արդյոք, թե ի՛նչ հարված էր սա ինձ համար... Ո՞ր շանթը, ո՞ր կայծակը կարող էր մարդկային սիրտն ավելի անողորմ կերպով հարվածել...» (նույն տեղում, էջ 93):

Մուրացանագետները՝ մասնավորապես Ս. Սարինյանը, Զ. Ավետիսյանը եւ Վ. Սաֆարյանը, նկատել են, որ իր կնոջ՝ Ոսկեհատի դավաճանության եւ անպատասխան սիրուց տառապող Մուրացանը շատ հաճախ հենց ի՛ր անձնական ապրումներն է շարադրել Սահականուշի խոսքերում: Համեմատենք Սահականուշի վերոբերյալ խոսքերը Մուրացանի՝ 1891 թ. ապրիլի 18-ին կնոջը գրած պատասխան նամակի տողերի հետ, որոնք նույնպես շարադրված են աստիճանավորման միջոցով եւ ավարտվում են վիրավոր հոգուն հասցված ցավի եւ կայծակի հարվածի համեմատությամբ. «Կարդացի եւ սարսուցա: Ոչ մի շանթ, ոչ մի կայծակ չէր կարող հարվածել հինավուրց կաղնին այնպես անողորմ, ինչպես քո հեռագիրը»: (Մ., հտ. 7, էջ 372): Հետաքրքիր է նաեւ, որ վիպասանը, այնուամենայնիվ, շարունակում է սիրել Ոսկեհատին, նույնիսկ արդարանալ՝ նրա դավաճանական արարքը հավանաբար խիստ խոսքերով դատապարտելու համար. «Երեկ մի նամակ եմ գրել քեզ, որի բովանդակությունից շատ քիչ բան եմ հիշում. բայց այսքանը գիտեմ, որ խիստ հուզված դրության մեջ եմ եղել եւ քեզ վրդովելու համար բավական անզգույշ... Քո մի ավուր ուրախության համար ես պատրաստ եմ ամեն տեսակ վշտեր տարիներով տանելու՝ միայն թե այդ վշտերի մեջ քեզնից չսիրված լինելու հզոր վիշտը չլիներ... այդ կետն է ահա մոլորեցրել իմ առողջ դատողությունը, ես զղջում եմ»:

¹² Ս. ՄԵԼՔՈՆՅԱՆ, Ակնարկներ հայոց լեզվի ոճագիտության, Եր., 1984, էջ 223:

(նույն տեղում, էջ 371–372): Ուշադրության արժանի է «...քեզնից չսիրված լինելու հզոր վիշտը չլիներ...» արտահայտության ստորոգյալի բայական ժամանակաձևեր. ոչ թե չլինի, այլ չլինեա: Այսինքն՝ միանշանակ է, որ կինը խոստովանել է նաեւ, որ չի սիրում ամուսնուն: Բայց նույնիսկ այդ խոստովանանքից հետո Մուրացանը զղջում է իր գրած խիստ խոսքերի համար... Հոգեբանական այս բարդույթը նա վերարտադրել է Սահականուշի կերպարում: Աշոտ Երկաթի դավաճանությունից խոցված թագուհին Սեւանա կղզում ասում է նրան. «...ես եկա Կաքավաբերդ: Բայց քո սառն ընդունելությունը ինձ վշտացրեց... Եւ դրա հետեւանքն եղավ այն, որ ես քո սիրտը ցավեցնել ուզելով՝ պատմեցի, թե ինչպէս մեր բոլոր աշխարհը գիտակ է քո հանցավոր սիրուն, թե զորքն ու ժողովուրդը գրգռված են քո դեմ, ...թե հոգեւորականությունը դատապարտում է քո վարմունքը... Ավա՛ղ, ես կարծում էի, թե այս հայտնություններով պիտի զգաստացնեմ քեզ... բայց չարաչար սխալվեցա: Խոստովանում եմ՝ ես գործեցի իբրեւ թույլ կին, իբրեւ սիրող սրտի տեր: ... Ես ճանաչեցի իմ սխալը. տեսա իմ անխորհուրդ վարմանց հետեւանքը եւ չարաչար զղջացի...» (Մ., հտ. 4, 305–306): Հեղինակի եւ Սահականուշի կերպարների ընդհանրության մանրամասն հիմնավորումը տրված է Զ. Ավետիսյանի նշված աշխատությունում (161–69), որտեղ իր դիպուկությամբ առանձնանում է հատկապես հետեւյալ ձեւակերպումը՝ «Մուրացանը Ֆլոբերի նման կարող էր ասել՝ Սիրանուշը— դա ես եմ»¹³:

Վիպասանի անձնական ողբերգությունների որոշ արձագանքներ նկատելի են նաեւ Յլիկ Ամրամի կերպարում, որը եւս անպատասխան սիրո եւ դավաճանության զոհ է: Սակայն, ի տարբերություն թագուհու, նրա տառապանքի դրսեւորումներն ավելի առարկայական են: Նա ոչ միայն նախատում, այլեւ զնդան է նետում դավաճան սիրեցյալին եւ ապստամբում է թագավորի դեմ: Մարտադաշտում կատարած քաջագործությունների համար Յլիկ մականունն ստացած այս անվեհեր ռազմիկը անսահման ջերմությամբ սիրել ու երկրպագել է իր կնոջը: Նույնիսկ դաժան պատիժների ենթարկելիս հույս է ունեցել դրանով վերադարձնել նրան ու վերագտնել ընտանեկան երջանկությունը: Որոշ ժամանակ անց նույնիսկ որոշել է ներել եւ ազատել նրան պատժից, բայց Ասպրամն արդեն ինքնասպան էր եղել: Այս մասին Ամրամը պատմում է Մարգպետունուն

¹³ Զ. ԱՎԵՏԻՍՅԱՆ, Հայ պատմավեպի պոետիկան, Ե., 1986, էջ 165:

իրենց երկրորդ հանդիպման ժամանակ, երբ պատրաստվում էր իր կալվածքներն օտարի հետ փոխանակել եւ հեռանալ այն ամրոցից, որտեղ պատահել էր այդ ողբերգությունը: «Ինչո՞ւ համար եմ ուշանում, ազատենք վերջապես թշվառին», մտածեցի ինքս ինձ եւ վեր թռա տեղից: ...Շտապ-շտապ դիմեցի դեպի աշտարակը... ներս մտա եւ ի՞նչ տեսա, Աստված իմ... Իմ կիներ, իմ սիրած Ասպրամը կախված առաստաղից... Այդ տեսարանը զարհուրեցրեց ինձ, երկինքը կարծես փլավ իմ գլխին, եւ դժոխոց ոգիները պատեցին իմ շուրջը իրենց արհավիրներով... Մի վայրկյան միայն տեսա ես զարհուրելի պատկերը, մռնչացի ինչպես անապատի առյուծը, որ գոռում է հսկայի հարվածն առնելուց. իմ ձայնը որոտաց դղյակի կամարներում, մարդիկ իրար անցան, իսկ ես հափշտակեցի նրան, սեղմեցի կրծքիս եւ խեղագարի նման դուրս փախա աշտարակից... Մի վայրկյան ինձ այնպես թվաց, թե նա կենդանի է. թե շուտով պիտի խոսե իմ ականջին. թե յուր լուսալիր աչքերը պիտի բանա... Ավա՛ղ, այդ միայն ցնորք էր...» (Մ., հտ. 4, էջ 426–427):

Դարձյալ նկատելի են նույն հոգեվիճակն ապրող հերոսների խոսքի ոճավորման ընդհանրությունները՝ հոգետորական, ընդհատվող արտահայտություններ, հուզական բացականչություններ (Աստված իմ..., Ավա՛ղ...), որոնց հաջորդում են արդեն գնալով հոգեկան տառապանքը ավելի խորացնող աստիճանավորումով նախադասություններ: Սակայն վեպում հանդիպող աստիճանավորումները հիմնականում ամփոփված են նման իրադրությունների պատկերման համար առավել կիրառելի արտահայտչամիջոցի՝ հակադրության կազմում՝ արտահայտված հակադարձ հիմունքի կամ զիջման պարագա պարունակող ստորադասական նախադասություններով: Դրանք եւ հերոսների հոգեկերտման, եւ գեղարվեստական խոսքի կատարելության ինքնատիպ գեղաքանդակներ են: Վիրավոր հոգու գալարումների պատկերավոր նկարագիրներ կան նաեւ Ամրամի եւ Մարզպետունու առաջին հանդիպման զրույցի տողերում, երբ սեպուհին հայրենակործան ապստամբությունից հետ կանգնեցնելու համար Գեւորգ իշխանն ասում է. «Բայց եթե կարողանայիր մի վայրկյան սառն ուղեղով դատել, եթե երիտասարդական անփորձ եռանդը տեղի տար խոհեմության եւ իմաստության... վրեժխնդրության փոխարեն վառվեր քո սիրտը հայրենիքի սիրով... այն ժամանակ հավատացած եմ, չէիր կամենալ մի կնոջ պատճառով հայրենյաց դավաճանի անունը վաստակել» (Մ., հտ. 4, էջ 163): Այս ոչ նրբանկատ խոսքերը ավելի են բորբոքում առանց

այդ էլ հոգեկան գալարումներից տառապող սեպուհի զայրույթը: Նրա պոռթկուն պատասխանը դարձյալ աստիճանավորման ու հակադրության միասնական կիրառությունը ձեւավորված մի սքանչելի գեղապատկեր է:

«Մի կնոջ պատճառով, ասացիր... Օ՛հ, ինչպե՞ս կկամենայի, որ մենք մի անծանոթ դաշտի վրա լինեինք, եւ ես այդ խոսքը լսեի քեզանից այնտեղ եւ ոչ թե իմ վրանում... Հավատա՛ ինձ, Մարգալետունի՛ իշխան, որքան էլ դու հզոր, որքան էլ քաջամարտիկ, բայց ես իմ սրով կպատռեի քո կուրծքը, եթե նա մինչեւ անգամ ծածկված լիներ պողպատե լանջապանով... Դու կարողանում ես ասել մի կին՝ այն արարածին, որ իմ տան թագուհին, իմ սրտի աստվածուհին էր մինչեւ այսօր...» (նույն տեղում, էջ 164):

Մարգալետունին ճարահատյալ որոշում է մի վերջին փորձով մեղմել Ամրամի զայրույթը եւ հորդորում է հետեւել Սահակ Սեւադայի օրինակին, որը, չնայած Աշոտ երկաթի հրամանով կուրացվել էր, այնուամենայնիվ, հանուն հայրենիքի փրկության՝ իր մեջ ուժ էր գտել իջեցնելու ապստամբության դրոշմը: Բայց այդպիսի համեմատությունն անընդունելի է այն մարդու համար, որի ոչ թե աչքերը, այլ սիրտն է կուրացել: Թեեւ Յլիկ Ամրամի պատասխանը կառուցված է հրամայական եղանակի բայաձեւերի աստիճանավորումով, բայց կորցրածը հետ բերելու անհուսական ճիշդ է, ասես աշխարհին ուղղված աղերսի ու բողոքի աղաղակ, որին ոչ ոք չի արձագանքում. «Ո՛հ, ի՞նչ անեմ. ինչպե՞ս հավատացնեմ քեզ, թե որքան տարբեր է իմ վիշտը Սեւադայի վշտից... հանեցե՛ք եւ իմ զույգ աչքերը, առե՛ք ինձանից իմ իշխանությունը, իմ հարստությունը, իմ կալվածքները, բոլոր անձնական բարիքները, բայց վերադարձրե՛ք ինձ ա՛յն, ինչ որ Աշոտը խլեց ինձանից. վերադարձրե՛ք ինձ իմ պատիվը, իմ Ասպրամը...» (Մ., հտ. 4, էջ 170):

Մինչեւ Յլիկ Ամրամի բանակատեղին այցելելը Մարգալետունին եղել էր արքայի դեմ ապստամբության գլխավոր կազմակերպչի՝ Սահակ Սեւադայի ամրոցում, ականատես եղել նրա անմխիթար վիճակին, լսել Աշոտ երկաթի հասցեին ուղղված նրա ցասման ու վրիժառության խոսքերը, որոնցում նույնպես նկատելի է հեղինակի՝ հատկապես աստիճանավորման միջոցով կերպարների հոգեկերտման հմտությունը: «Տե՛ր Մարգալետունի... երբ դու հեռանաս, եւ ես մնամ միայնակ, երբ այս ահագին սրահի մեջ չղջիկները գան ինձ ընկերանալու, երբ առավոտյան արեւը բերե ինձ նույն խավարը՝ ինչ որ բերել էր գիշերը... Երբ լսեմ իմ թշվառ հարսի տխուր երգերը կամ կույր ամուսնու սեւ բախտը լացող նրա ողբե-

րը... Երբ Գրիգորի որդին՝ փոքրիկ Սեւադան, գա հարյուրերորդ անգամ ինձ հարցնելու, թե՝ «Պապիկ, դու ծերացար, Աստված քեզ կուրացրեց. իսկ իմ հայրը ինչո՞ւ համար է կույր...», երբ այս բոլորը գան եւ աղմկեն ուղեղս, խռովեն հոգիս, երբ սիրտս անընդհատ գոռա՝ «վրեժ, վրեժ անգգամին...», ի՞նչ անեմ ես այն ժամանակ...» (նույն տեղում, էջ 141):

Իհարկե, նման հոգեցունց պատկերներով կարծես գաղափարախոս Մուրացանին հաջողվում է ապացուցել, որ բոլորի ողբերգության միակ մեղավորը Աշոտ Երկաթն է, բայց արդյո՞ք միակ: Այս հարցին պատասխանելուց առաջ նախ պետք է պատասխանել հետեւյալ հարցերին: Ինչո՞ւ են Սեւադան եւ Ամրամը ապստամբել արքայի դեմ, ինչո՞ւ է անպատասխան սիրուց ու դավաճանությունից տառապում թագուհին: Ըստ գաղափարախոս Մուրացանի՝ որովհետեւ արքան հավատարիմ ամուսին չէ եւ սիրել է ու շարունակում է սիրել ոչ թե իր կնոջը, այլ Ասպրամին: Այն դեպքում ամենակարեւոր հարցը՝ իսկ ինչո՞ւ է Սահականույշի հետ ամուսնացել: Պատասխանն ակնհայտ է ու միանշանակ՝ որովհետեւ Սահակ Սեւադան, չնայած գիտեր Աշոտի եւ Ասպրամի սիրո մասին, այնուամենայնիվ, փառասիրությունից դրդված եւ օգտվելով այն հանգամանքից, որ Աշոտը այդ օրերին զբաղված է եղել երկրի ամրապնդման հրատապ գործերով, խորամանկորեն նախ համոզել է Ասպրամի մորը, որ դստերը կնություն տա Յլիկ Ամրամին, ապա այնպես է արել, որ Աշոտը, պետության շահերից ելնելով, ստիպված ամուսնանա Սահականույշի հետ (տե՛ս նույն հատորը, էջ 53–54): Քանի որ Մուրացանի համար կատարյալ հերոսը բարոյական եւ հայրենասեր անհատն է, փորձենք տեսնել, թե այս հատկանիշները որքանով են բնորոշ Սեւադայի կերպարին: Արքային բարոյական դաս տալու կամ պատժելու համար երկրի պետականությունը վտանգող Սեւադան հենց ինքն է առաջին եւ շատերի ողբերգության գլխավոր պատճառ դարձած անբարո արարքի հեղինակը, որովհետեւ իր փառասիրական ծրագրի իրականացման համար կործանել է Աշոտի եւ Ասպրամի սերը: Նրա հայրենասիրությունը եւս թերի է: Թերի է, որովհետեւ նա պարծենում է, թե Հայաստանից արքայի բացակայության ժամանակ նրան պատկանող Կայեան բերդը գրավելուց հետո «ջարդել է» արքային հավատարիմ մի քանի հարյուր գյուղացիների, որոնք միացել էին արքայի զինվորներին, եւ... հնձել տվել ու այրել նրանց արտերը... (տե՛ս նույն տեղում, էջ 132): Որքան էլ գաղափարախոս Մուրացանը ջանում է Սեւադային դասել դրական հերոսների շարքը, միեւնույն է, մինչեւ Մարգարետունու հետ զրույցի

վերջնամասը չի հաջողվում: Ընթերցողը գուցե խղճում է կույր ապստամբին, բայց չի համակրում: Վիպասանին հաջողվել է գրեթե մոռացության մատնել Սեւադայի բոլոր թերությունները, երբ նա, ի վերջո տեղի տալով Մարգպետունու հորդորներին ու խնդրանքներին, ասում է. «Դու ինձ համոզեցիր, տե՛ր Մարգպետունի. իմ մեջ շարժեցիր նախանձավարության զգացում. ես չեմ կամենում, որ դու հայրենասիրությամբ գերազանցես ինձ: Թող այդպես լինի. ես թողնում եմ վրեժխնդրությունը» (նույն տեղում, էջ 142): Այս խոսքերի շնորհիվ ասես միանգամից վեհանում, ամբողջանում է Սեւադայի հոգեբանորեն բարդ, հակասական եւ իհարկե ինքնատիպ կերպարը: Այս դրվագը՝ որպես անձնականը հայրենիքի շահերին ստորադասելու փայլուն օրինակ, նաեւ վեպի գաղափարական բովանդակության բարձրակետերից է:

Սակայն հարկ ենք համարում նշել, որ այս տողերից առաջ Սեւադայի ապստամբության պատճառները առավել համոզիչ դարձնելու համար Մուրացանը հորինել է մեր կարծիքով անիմաստ, վեպի հագեբանական ու քերթողական հյուսվածքին անհարիր մի պատմություն: Խոսքն Աշոտի՝ աներոջը գրած նամակի մասին է, որով Սահականուշին ամբաստանում է անբարոյականության եւ Վասակ իշխանի հետ սիրային կապերի համար (տե՛ս նույն տեղում, էջ 130): Նամակի բովանդակությունը սաստիկ վրդովում է նույնիսկ արքայի հավատարիմ զինակից Մարգպետունուն: «... Այն թագավորը, որ մինչեւ այդ այնքան բարձր էր եւ վեհ էր երեւում յուր աչքում, կարծես մի ակնթարթում գլորվեցավ, ընկավ այդ բարձրությունից. նրա վեհությունը ոչնչացավ. նա երեւաց այժմ իրան իբրեւ մի հասարակ, սինլքոր արարած, որին կրքերը շրջում, տարուբերում են ամեն կողմ, որ գերի է եւ ստրուկ է դարձած մարդկային արժանիքը անասնական բնագդին ստորադասող զգացմունքներին...» (նույն տեղում): Չնայած այս տողերն իջնող աստիճանավորման բավականին հաջող կառույց են, սակայն զուրկ են Մուրացանի գրչին բնորոշ գեղարվեստական արժեքից: Հայտնի է, որ «Գեւորգ Մարգպետունի» վեպը Մուրացանը հատվածաբար տպագրել է «Արձագանք» թերթի համարներում, որից հետո միայն սկսել է խմբագրել, որպեսզի առանձին գրքով տպագրի: Բայց հրդեհի ժամանակ այլ ձեռագրերի հետ ոչնչացել է նաեւ վեպի խմբագրված տարբերակը: Հավանական է, որ խմբագրելիս Մուրացանը վերանայած կամ ամբողջովին հանած կլինեք այդ նամակի հատվածը, որովհետեւ Աշոտ Երկաթի ամբողջական կերպարին տրամաբանական չէ

այդպիսի նսեմ արարք վերագրելը: Հակառակ դեպքում որ՞ն է արքայի խորունկ վշտի այդքան պատկերավոր նկարագրությունների իմաստը, ինչո՞ւ էր նա գահից հրաժարվել եւ կղզում ներանձնացած՝ մահ երագում: Ինչո՞ւ է վիպասանը Աշոտի առողջական վիճակի անակնկալ վատթարացման եւ մահվան պատճառը համարում ոչ այնքան ծովամարտում ստացած վերքը, որքան հատկապես Ասպրամի մահվան լուրը: Ինչո՞ւ է այդ «սինթոր արարածի» շուրթերին դրել թագուհուն ուղղված գնահատանքի այսպիսի խոսքեր. «Ո՛հ, դրանց պատճառով չհեռացա, ոչ էլ հուսահատությունն ինձ հալածեց: Այլ խիղճը, իմ ներքին մարդը... Ինձ հալածեցին, մանավանդ, քո տխուր աչքերը, վշտալի հայացքը, դալկահար դեմքը... ամեն մի քեզ տեսնելիս սիրտս տակնուվրա էր լինում, ամոթն ու խիղճը տանջում էին ինձ չարաչար... Բայց դու հետեւեցիր ինձ իբրեւ ամուսնասեր կին եւ ապացուցեցիր հարյուրերորդ անգամ, թե ես արժանի չէի քո սիրուն» (նույն տեղում, էջ 313): Ի տարբերություն Սեւադայի՝ Աշոտը փառասեր չէ, որեւէ մեկին դժբախտացնելու հատուկ սադրանք չի ծրագրել ու իրականացրել, ընդհակառակը՝ Սեւադայի սադրանքի զոհերից մեկն է: Այո՛, Աշոտը եւս մեղքի իր բաժինն ունի, իր պատճառով դժբախտացել են թագուհին ու Ամրամը, իր դեմ ապստամբած աներոջն ու աներորդուն դաժանորեն կուրացրել է... Բայց նա գիտակցում է իր մեղքերը եւ այնքան խորն է հոգեպես տառապում, որ հրաժարվելով գահից՝ տենչում է նաեւ օր առաջ հրաժեշտ տալ կյանքին... Աշոտ Երկաթ անհատի հիրավի հոգեբանորեն կատարյալ կերպարի ամբողջականությունը փաստելու համար բավարարվենք նրա խոսքերից եւս երեք քաղվածք կատարելով: Նախ հիշենք, թե ինչպես է նա արձագանքում Սահականույշի այն հորդորին, որ մոռանա անցյալը եւ աշխատի «ներկա վիճակը բարվոքել»: «Անցյալը մոռանա՛մ... մի՞թե կարելի է, մի՞թե հնարավոր է այդ, – բացականչեց թագավորը:– Երկնքի աստղերը կկողոպտեի՝ վարձատրելու համար այն մարդուն, որ կկարողանար մոռացնել տալ ինձ իմ անցյալը... որ յուր դեղերով կամ կախարդական հմայությունմբ հնար կգտներ իմ հիշողությունները բթացնելու... Օ՛հ, ինչպես երջանիկ կլինեի, եթե կարողանայի չհիշել այլեւս այն, ինչ որ կատարվել է... Այն, որի հիշատակը բազմազլխյան վիշապի պես կրծում, կեղեքում է իմ խիղճը... Կարո՞ղ եմ մի՞թե մոռանալ, որ ես Սեւադայի, իմ բարյացապարտ ազգակցի տունն ալերեցի՝ հորն ու որդուն միասին կուրացնելով... Կարո՞ղ եմ մոռանալ, որ ես Ամրամի, իմ հավատարիմ զինակցի ընտանիքը կործանեցի, նրա խաղաղության օթեւանը

դժոխքի փոխարկելով... Կարո՞ղ եմ մոռանալ, որ ես քո կյանքը թունավորեցի՝ կաթոգին սերդ անարգելով, երջանկությունդ կապտելով... (նույն տեղում, էջ 312): Հանգիստ լինե՞ր խիղճս, արդար լինե՞ին իմ գործերը, այն ժամանակ թեկուզ բոլոր աշխարհը կանգնե՞ր իմ դեմ, ես չէի ընկճվիլ. ոչ էլ հուսահատությունը կարող էր իմ հոգին հաղթահարել... Բայց խղճի անողոք խայթերին ես դիմադրել չկարողացա» (նույն տեղում, 313): Ցավի ու զղջման ավելի ռոմանտիկ, բայց ավելի տեսանելի ու տարողունակ նրբակերտում դժվար է պատկերացնել: Թեպետ այս մտքերն արտահայտված են թագուհու հետ երկխոսության ժամանակ, բայց ոճական առումով ավելի բնորոշ են պատկեր-մենախոսությանը, նույնիսկ պատկեր-խոհին: Ամբողջության մեջ սա մի հրաշալի փոխաբերությամբ է՝ նույնպես հագեցած լեզվի եւ պատկերավորման տարբեր արտահայտչամիջոցներով, որոնցից ամենաակնառուն հոետորական հարցերն են եւ գրեթե բոլոր նախադասություններում առկա աստիճանավորումը: Կառույցի շքեղությանը նպաստել են խոսույն մակդիրները (բազմազլխյան վիշապ, խաղաղության օթեւան, կաթոգին սեր, խղճի անողոք խայթեր), համեմատությունը (...վիշապի պես կրծում, կեղեքում է իմ խիղճը), չափազանցությունը (երկնքի աստղերը կկողոպտեի...), (...թեկուզ բոլոր աշխարհը կանգնե՞ր իմ դեմ, ես չէի ընկճվիլ...):

Վերջին քաղվածքները նույնպես թագուհու եւ արքայի երկխոսությանից են, բայց հայտնի ծովամարտից առաջ, երբ Սահականույշը խնդրում է հետ կանգնել ընդամենը հարյուր զինվորներով Բեշիրի տասը հազարանոց բանակի դեմ մարտի նետվելու խելահեղ ծրագրից:

«— Երկու զորավոր պատճառներ ստիպում են ինձ այդ քայլն անելու,— պատասխանեց թագավորը, — առաջինը՝ իմ արքայական պատվասիրությունը: Այս գոռոզ հագարացին համարձակվեցավ պատգամավոր ուղարկել ինձ եւ Սեւանը պահանջել, անվանելով այն ամիրապետի կաված... Այդ թշվառականը, որ ջարդ է կերել Մարզպետունու քսան զինվորներից, այնքան անգոր է համարում հայոց թագավորին, որ համարձակվում է այսօրինակ նվաստացուցիչ առաջարկություն անել նրան: Այժմ իմ պարտականությունն է հասկացնել նրան, որ առյուծը գառագղի¹⁴ մեջ էլ առյուծ-

¹⁴ Գառագղի կամ գառագիղ — 1. գազաններ պահելու երկաթե վանդակ, գազանների արգելարան՝ արգելոց, 2. ծուղակ, որոգայթ: Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հատոր առաջին, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Ե., 1969, էջ 372:

ծի սիրտ է կրում... Երկրորդ պատճառը, որ առավել զորավոր է, այն է, որ կյանքը կորցրել է յուր արժեքը իմ աչքում. նա դարձել է ինձ համար տանջարան... Այժմ ահա՛ հասել է ժամը, եւ ես պիտի օգուտ քաղեմ նրանից... ես վայրկյան առաջ կամենում եմ ազատվել խղճի խայթից, հոգվո անվերջ տանջանքներից ... Ես, իհարկե, չեմ մտածում իմ հիշատակի, այլ հետնորդների մասին. իմ մահվամբ ես մի խրախուսական օրինակ կթողնեմ նրանց համար...» (Մ., հտ. 4, էջ 344): Իսկ երբ թագուհին հակադարձում է, թե «... բայց քեզ հետ միասին տանել մահվան դեմ ուրիշ հարյուր հոգի, անիրավացի է...» (նույն տեղում էջ 344), արքան պատասխանում է. «... ես արդեն չափել եմ, կշռել իմ քայլը եւ գիտեմ, թե նա ո՛ւմ կարող է վնասել: Այս հարձակումը գուցե մի զոհ ունենա. բայց այդ զոհը կլինի նա, ով հետամուտ է մահվան. մնացյալները հաղթանակով կվերադառնան (նույն տեղում, էջ 345):

Ճիշտ է՝ այստեղ էլ աստիճանավորումը հերոսի ներաշխարհը պատկերելու էական բաժին ունի, սակայն այս հատվածի հմայքը եւ Աշոտ Երկաթի կերպարի վերջնական ձևավորումը պարփակված են հատկապես երկու արտահայտությունների մեջ: Առաջինը պատվախնդիր արքայի եւ անկոտրում զորավարի որոշումն է՝ արտահայտված հակիրճ, բայց տարողունակ փոխաբերությամբ՝ «...առյուծը գառազղի մեջ էլ առյուծի սիրտ է կրում»: Երկրորդը, որը արտահայտված է հակադրությամբ, հայրենասեր եւ իմաստուն արքայի՝ ոչ միայն ազգի ներկային, այլեւ ապագային ծառայելու ցանկությունն է՝ «Ես, իհարկե, չեմ մտածում իմ հիշատակի, այլ հետնորդների մասին. իմ մահվամբ ես մի խրախուսական օրինակ կթողնեմ նրանց համար...»:

Ամփոփելով՝ մեկ անգամ եւս հիշեցնենք, որ մեր նպատակը ոչ թե աստիճանավորումը լեզվի եւ պատկերավորման մյուս արտահայտչամիջոցներին հակադրելը կամ գեղարվեստական խոսքում նրա դերի գերազնահատումն էր, այլ ցույց տալը, թե «Գեւորգ Մարզպետունի» վեպում կերպարների տիպականացման գործում որքան կարեւոր, երբեմն էլ նույնիսկ առանցքային է նաեւ աստիճանավորման դերը: Այդ են վկայում հերոսների խոսքերից մեր կատարած քաղվածքները, որոնք խարսխված են հատկապես աստիճանավորման հմուտ կիրառությունների վրա: Եթե այդ հատվածներից պայմանականորեն հանենք աստիճանավորումը (մի բան, որը անհնար է), կառույցի ամբողջականությունը պարզապես կփլուզվի՝ թուլանալով, գրեթե կորցնելով իր գաղափարական ներուժն ու գեղար-

վեստական հմայքը: Մեջբերված եւ նմանատիպ շատ դրվագներ ոչ միայն Մուրացանի գեղագետի, այլեւ իր հերոսների ներաշխարհի բազմաշերտ ծալքերը վարպետորեն նրբակերտող հոգեբանի մեծության ամենախոսուն վկայություններն են:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Մուրացան, Գեորգ Մարգպետունի, Հովհաննես Դրասխանակերտցի, Սահականույշ, Սեւադա, Ամրամ, Աշոտ Երկաթ, աշխարհայացք, գաղափարախոս, պատմավեպ, աստիճանավորում, կերպար, հոգեբանություն, գեղարվեստական պատկեր, պատկերավորման արտահայտչամիջոցներ, համեմատություն, փոխաբերություն, մակդիր:

РЕЗЮМЕ

В статье рассматривается роль градации в изображении внутреннего мира героев и типизации персонажей в историческом романе Мурацана «Геворг Марзпетуни». Автор статьи, характеризуя мировоззрение Мурацана, основывается на мнении предыдущих исследователей о том, что для писателя Армянская Апостольская Церковь и морально крепкая семья являются важнейшей основой спасения нации. Отмечается, что, в отличие от других функциональных стилей, в художественной речи градация является не только синтаксическим оборотом, усиливающим или ослабляющим высказывание, но и важнейшим выразительным средством художественного образа.

На основе фрагментов из романа показано, что при изображении различных душевных состояний героев автор выражает градацию через различные грамматические структуры. Например, в эпизодах, посвященных воспоминаниям королевы Саакануш о счастливых днях, преобладают глаголы в желательном наклонении: хотела, мечтала, жаждала. Грустные размышления героев переданы через предложения с условными или противительными придаточными частями. В то же время их душевное волнение и гнев выражены через прерывистые, незаконченные предложения, риторические вопросы, восклицания и иногда формы императива.

Однако стиль Мурацана не включает в себя эпизоды, построенные исключительно на градации. Напротив, она тонко вплетена в образы, насыщенные эпитетами, сравнениями, гиперболами и другими выразительными средствами, являющимися самыми великолепными проявлениями искусства речи Мурацана.

SUMMARY

The article examines the role of gradation in illustrating the inner world of the characters and in the typification of figures in Muratsan's historical novel "Gevorg Marzpetuni." The article's author, when characterizing Muratsan's viewpoint, bases his analysis on the perspective of previous researchers that the novelist saw the Armenian Apostolic Church and a morally strong family as the key foundations for the nation's salvation. It is noted that, unlike other functional styles, in artistic speech, gradation is not just a syntactic construction that enhances or weakens the statement but also one of the key expressive means in shaping the artistic image.

By using excerpts from the novel, it is demonstrated that when portraying the various emotional states of the characters, the author expresses gradation through different grammatical structures. For example, in the passages recalling the happy days of Queen Sahakanuysh, verbs in the subjunctive mood predominate: I wished, I dreamed, I longed for. The sad reflections of the characters are expressed through sentences containing conditional or adversative clauses. Meanwhile, their mental turmoil and anger are conveyed through interrupted, unfinished sentences, rhetorical questions, exclamations, and sometimes imperative verb forms.

However, Muratsan's artistic style does not consist of passages structured exclusively through gradation. Instead, they are subtly woven into images enriched with epithets, comparisons, hyperbole, and other expressive means representing the most magnificent manifestations of Muratsan's literary artistry.

